



ԱԼԱՎԵՐԴԻ ՕՐՇՈՒՄ ԿԵՆՏՐՈՆ
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՏԵԼԵԿՄՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
PUBLIC ENVIRONMENTAL INFORMATION CENTRE OF ALAVERDI

ՀՀ Լոռու մարզ, ք. Ալավերդի,
Զորավար Անդրանիկի 8/1, 403 սենյակ
հեռ. (+374) 91199324
էլ. փոստ info_alaverdi@aarhus.am
anushevoyan@rambler.ru

Lori, Alaverdi,
Zoravar Andranik str. 8/1, 403
Tel. (+374) 91199324,
E-mail info_alaverdi@aarhus.am
anushevoyan@rambler.ru

ՀՀ Արտակարգ իրավիճակների
Նախարար պարոն
Ա. Երիցյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն նախարար.

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 27, 27.1 և 33.2 հոդվածները, ՀՀ կողմից վավերացրած Օրհուսի համաձայնագրը և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը՝ որպես պատասխանատու մարմին,

Խնդրում եմ Ալավերդու Օրհուս կենտրոնին տրամադրել տեղեկատվություն հետևյալի մասին.

Ալավերդի քաղաքի տածքով հոսող Դեբեդ գետի ափով բետոնե հենապատը, 280մ-ից ավելի երկարությամբ գրեթե փլուզման եզրին է: Խնդիրը Ալավերդու քաղաքապետարանի մշտական հետևողականության ներքո է: Ալավերդու քաղաքապետի հետ բազմաթիվ քննարկումներ են եղել, սակայն համայնքի բյուջեի սուղ ծախսերով հնարավոր չէ վերականգնողական աշխատանքներ կատարել: Անուշադրության մատնելը անդառնալի հետեւանքներ կարող է ունենալ:

1. Կատարվել են արդյոք ուսումնասիրման աշխատանքներ նախարարության համապատասխան կառույցի կողմից
2. Ի՞նչ աշխատանքներ կամ միջոցառումներ են ձեռնարկվում այդ ուղղությամբ

Կից ներկայացնում եմ նաև լուսանկարներ:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան է տրվում այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30օրյա ժամկետ): Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու մեր հարցմանը պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Տեղեկության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում ենք գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11) և հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող ենք ուղղել հարցումը:

Շնորհակալություն:

Հարգանքով
Ալավերդու Օրհուս կենտրոնի համակարգող
15.03.2016թ.

Անուշ Էվոյան